


Թ. ԲԱԳՎՈՐՅԱՆ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ



Թ. ՔԱԳՎՈՐՅԱՆ

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ԴՐՈՒԹՅՈՒՆԸ



Պատ. խմբագիր՝
Բ. ԱՔԱՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից Ճապոնիան իրենից ներկայացնում է տիպիկ ծովային պետություն, ցրված բազմաթիվ կղզիներով, վորոնց թիվն անցնում է 2000-ից: Դա կղզիների մի հավաքածու չէ, վորոնք գտնվում են Ճապոնական ծովի յեվ Խաղաղ օվկիանոսի միջև: Այդ կղզիների մի մասը կազմում են Ճապոնիայի մետրոպոլիան (ժայռ յերկիրը), իսկ մի մասը հանգիստանում են նրա գաղութները: Մայր յերկիրն ընդգրկում է կղզիների հեռեկայ չորս խմբակները՝ Հոնսյու, Սիկոկու, Կյուսյու, Ռյուկյու ու Հոկկայդո, ընդհանուր տարածությունը 383,900 քառ. կիլոմետր:

Գաղութներում գտնվում են՝ Ֆուժոգա կղզին, Պիսկադորյան կղզիները, Մանդասային կղզիները, Կոբեյան, հյուսիսային Սախալինը և Կվանսուկը—ընդհանուր տարածությունը 298,500 քառակուսի կիլոմետր:

Յերկրի բնակչության թիվը 1930 թվի վիճակագրական տվյալների համաձայն կազմում է 90,394.000 հոգի, վորից հին Ճապոնիայում՝ 64,447,000 հոգի, իսկ գաղութներում՝ 25,947.000 հոգի:

Ամբողջ բնակչության կեսն զբաղվում է գյուղատնտեսությամբ, մեկ հինգերորդ մասն աշխատում է արդյունաբերության մեջ, մեկ տասերորդ մասն աշխատում է արանսպորտում և ձկնորսության բնագավառում: Բնակչության խոշոր մասն ապրում է ծովեզերքում: Ծովեզերքում են գտնվում նաև խոշոր քաղաքները, վորոնք միաժամանակ հանգիստանում են և լավ նավահանգիստներ:

Ճապոնիայում կա հարյուր հազարից ավելի բնակչ-



11-2733294

Սրբազրիչ՝ Կ. Այվազյան
Հանձնվել է արտադրության 1934 թ. ապրիլի 13-ին,
Ստորագրվել է տպագրելու 1934 թ. ապրիլի 26-ին:
Գլավխո 282, Տիրած 2500, Գառվել № 296

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՆՐԱՍԻ ՏՊԱՐԱՆ, ԵԱԼԲԱՆԴՅԱՆ 50

չությունն ունեցող 28 քաղաք. նրանցից զլիսավորներն են. 1) Տոկիո (Ճապոնիո մայրաքաղաքը) — 2218 հազար բնակչությամբ, 2) Ոսակա — 2453 հազար բնակչությամբ, 3) Նագոյա — 907 հազար, 4) Կորե — 787 հազար, 5) Կիոսո — 765 հազար և 6) Յոկահամա — 529 հազար բնակչությամբ:

2. ՃԱՊՈՆԻԱՅԻ ԵՎՈՆՈՄԻԿԱՆ

Վերջին 40—50 տարվա ընթացքում ճապոնական տնտեսութեան ներսում տեղի յեն ունենում խոշոր փոփոխություններ: Դեռ 1900 թվին հանդիսանալով տիպիկ ագրարային յերկիր, հետամնաց գյուղատնտեսությամբ և միայն թույլ զարգացում ունեցող և նոր ստեղծվող արդյունաբերություններ, Ճապոնիան շուտով վերածվում է ագրարային ինդուստրիալ յերկրի:

Յերկրի ներսում գոյություն ունեցող ֆեոդալական ազնվականությունը յերկար տարիներ Ճապոնիան կտրված է պահել զբսի աշխարհից, զբա մեջ տեսնելով իր շահերին համապատասխանող քաղաքական ու տնտեսական կարգերի պահպանման յերաշխիքը: Բայց միջազգային շուկայի զարգացումը, Խաղաղ ովկիանոսի ավազանում առևտրի ու արանսպորտի զարգացումը խոշոր խթանի դեր է կատարել Ճապոնիո արդյունաբերացման համար: 19-րդ դարի յերկրորդ կիսից սկսած Ճապոնիայում սկսում են կառուցվել գործարաններ, յերկաթուղիներ, զարգանում են արտաքին առևտուրը և գյուղատնտեսությունը:

Արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը 412000-ից (1896 թվին) բարձրանում է մինչև 2.066.600-ի (1928 թվին): Նույն ժամանակամիջոցի համար արտաքին առևտուրը 255 միլիոն իյեն* գումարից հասնում է մինչև 1403 միլիոն իյենի, տեքստիլ արդյունաբերության արտադրանքը 645 հազար կապոցից հասնում է 2451 հազար կապոցի, ածխի հանույթը 6,7 մի-

*) Ճապոնական դրամ, մեկ իյենը հավասար է 35 կոպեկի:

լիոն տոննից — մինչև 33,9 միլիոն տոննի, չուգունի և պողպատի արտադրանքը 24 հազար տոննից — մինչև 2797 հազար տոննի, յերկաթուղային ցանցի յերկարությունը 5,490 կիլոմետրից — մինչև 18751 կիլոմետրի, հացահատիկի յելույթը 122,3 միլիոն ցենտներից — 146,9 միլիոն ցենտների, բոժոժի յելույթը 8,2 միլիոն ցենտներից — 54,8 միլիոն ցենտների, նավատորմի տոննաժը 477 հազար տոննից — մինչև 3729 հազար տոննի:

Այնուամենայնիվ Ճապոնիան շարունակում է Ֆեալ ագրարային-ինդուստրիալ մի յերկիր, մի յերկիր, վորի եկնոմիկայի մեջ գերակշռող տեղ է գրավում գյուղատնտեսությունը:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ա) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ

Ճապոնիայի գյուղատնտեսության հիմնական ճյուղերն են. 1) դաշտագործությունը, վորի մեջ վճռական տեղ են գրավում բրնձի, ցորենի ու գարու արտադրությունը, 2) շերամապահությունը, վորի արտադրանքը դարձել է ճապոնական արտաքին առևտրի հիմնական որյեկտներից մեկը, 3) դանազան այլ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը — յեգիպտացորեն, կարտոֆիլ և այլն, 4) տեխնիկական կուլտուրաները — վուշ, կանեփ, ինդիգո (բույս, վորից կապույտ ներկ են ստանում), ծխախոտ, շաքարեղեգ, 5) թեյի մշակությունը, 6) այգեգործությունը և պողպատեծությունը, 7) անասնապահությունը և ձկնորսությունը:

Ամբողջ գյուղատնտեսության ներսում գերակշռող դիրք ունի դաշտագործությունը և շերամապահությունը, վորը յերևում է և գյուղատնտեսության ամբողջ արտադրանքի արժեքի վերաբերյալ հետևյալ տվյալներից:

Գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը 1929 թ. հավասար էր 3,53 միլիարդ իյենի, նրանից դաշտագործության արտադրանքը կազմում էր 2537 միլիոն իյեն, անասնապահության արտադրանքը—112,9 միլիոն իյեն, շերամապահությանը—881,4 միլիոն իյեն:


Ճապոնական գյուղատնտեսության բնորոշ գծերից մեկն այն է, վոր նրա մեջ տիրապետում է մոնոկուլտուր տնտեսությունը: Դաշտագործության մեջ ամենատարածված կուլտուրան հանդիսանում է բրինձը և «բրինձ» խոտը: Ճապոնիայում հավասարազոր է «հաց» խոտը: Վոր դա այդպես է, վկայում է այն հանգամանքը, վորը 5,9 միլիոն քե *) վարելահող տարածությունից 1931 թվին բրինձի տակ յեղել է 3,2 միլիոն թե: Մինչև տնտեսական ճգնաժամի սկզբի տարիները բրինձի արտադրանքի արժեքը կազմում էր գյուղատնտեսության արտադրանքի արժեքի զրեթե կեսը և արտահայտվել է 1,5—1,6 միլիարդ իյեն զուամարով:

բ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏԱՄՆԱՅՈՒԹՅՈՒՆԸ:

Ճապոնական գյուղատնտեսության համար չափազանց բնորոշ է այն, վոր նրա մեջ մինչև այժմ էլ պահպանվել են ավաստապետական-հորստիքական կարգերին հասուկ փոխնորարեություններ:

Հողը կենտրոնացված է փոքրաթիվ խոշոր կալվածատերերի ձեռքում: 10-ից ավելի հեկտար ունեցող 50000 տնտեսություններում կենտրոնացված է 1,462,000 հեկտար, հող, վոր նշանակում է թե տնտեսությունների ընդհանուր թվի մեկ տոկոսի ձեռքում գտնվում է ամբողջ հողի մեկ քառորդ մասը: 344,000 տնտեսություններ ունեն 3-ից մինչև 10 հեկտար հող, այսինքն՝ 1,576,000 հեկտար տարածություն, վոր նշանակում է թե

*) Մեկ Թե-ն հավասար է 0,99 հեկտարին:




Բրնձի դաշտի մշակման պրիմիտիվ յեղանակը Ճապոնիայում:

անտեսությունների 7 տոկոսի ձեռքում գտնվում են հողերի մեկ քառորդից ավելին: Այսպիսով հողերի տարածության կեսը զբաղում է անտեսությունների 8 տոկոսի ձեռքում:

Լայն տարածված է վարձակալական հիմունքներով հողի շահագործման հանձնելը: 5.576,000 գյուղական տնտեսություններից 1,478,000 անտեսություններ բոլորովին հողազուրկ են, 2,500,000 անտեսություններ ունեն $\frac{1}{2}$ -ից մինչև 1 հեկտար: «Սեփականատերերի» այս խմբերից 2,360,000 անտեսություններ՝ իրենց խղճուկ գոյությունը պահպանելու համար, վարձակալական հիմունքներով հող են վերցնում խոշոր կալվածատերերից: Այս յեթեվայրը — վարձակալական հիմունքներով հող վերցնելը — դարձել է նապոնական գյուղատնտեսության հասկանալիան յեթեվայրներից մեկը յեվ բնորոշում է նրա սեղ գոյությունը ունեցող ավասապեսական փոխնարարություններ:

Փոքր տարածություն ունեցող հողամասերը, վորոնք գտնվում են գյուղացիության մեծամասնության ձեռքում (անտեսությունների 70 տոկոսն ունի մեկ հեկտարից պակաս հողամաս), չեն ապահովում գյուղական տնտեսությունների ապրուստը: Բարձր կապալավարձը, զանազան տեսակի հարկերը և սուրբերն ել ավելի յեն վատթարացնում նրանց դրությունը: Ճապոնական գյուղացին արնքում է կալվածատիրոջ սահմանած կապալավարձի ու կառավարությունը վճարվող հարկերի ծանր լծի տակ:

Ճապոնական կալվածատերը, կուլակը — միաժամանակ առևտրական է, վաշխառու, վորը մեկ կողմից շահագործում է գյուղացիական յայն մասսաներին «ըս հին սովորությունների»՝ հողի բարձր կապալավարձի միջոցով, մյուս կողմից՝ ծծում է նրա քրտնքի վերջին արդյունքը՝ իր սված փոխառությունների հսկայական տոկոսների միջոցով: Բացի դրանից, նա ստանում է նաև



Գյուղատնտեսությունը ձապոնական նահապետական առարկ

կապիտալիստական շահույթ՝ գյուղացիութիւնից կապա-
լավարձի դիմաց ամենաչնչին գներով վերցված և շուկա-
յում բարձր գներով վաճառվող գյուղատնտեսական մթերք-
ներից:

Ճապոնական խոշոր կալվածատերերը, կուլակը, վար-
ձակալական հիմունքներով հողի շահագործումից ստացվող
յեկամուտները մեծ մասամբ գործադրում և ավելի ար-
դունապէս առեւտրական կամ արդյունաբերական ձեռ-
նարկումների մէջ: Այդ իսկ պատճառով հապոնական
գյուղատնտեսութիւնը, պահպանելով իր մէջ ավաստապե-
տական կարգերի մնացորդները, բնորոշում և՛ մեկ կող-
մից զգալիորեն զարգացած խոշոր կալվածատիրութեամբ
(հողի վարձակալական ոգտագործման ծայրահեղ մանրաց-
ման պայմաններում) յետ մյուս կողմից՝ անընդհատ մտն-
րացվող յետ ցածր սեխնիկայով գործող հողագործու-
թեամբ:

Այստեղ պետք է ավելացնենք նաև այն, վոր ճապո-
նիայի հողն առանց պարարտանյութերի գործածութեան
բերք չի տալիս, իսկ հանքային պարարտանյութերի ար-
տադրութիւնը և վաճառքը գտնվում և յերկու հսկա հաս-
տատութիւնների ձեռքում—Միցոցի և Միցուբիսի, այդ
հսկա կապիտալիստական միավորումները հանդիսանում են
ճապոնական գյուղացիութեան ամենախոշոր ազրուկները:

Գ) ԱԳՐԱՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ճապոնական բուրժուա-կալվածատիրական, միապե-
տական-ազնվական կառավարութեան գյուղատնտեսու-
թեան բնագավառում կատարվող ձեռնարկումները բնա-
կանաբար գնում են խոշոր կալվածատերերի շահերի
պաշտպանութեան գծով, ի հաշիվ լայն աշխատավորական
մասսաների ծայրահեղ շահագործման: Յերկրի ներսում
գյուղատնտեսական մթերքների վաճառման համար բարձր

գներ ապահովելու նպատակով, կառավարութիւնն ստեղ-
ծել է մի շարք մաքսային արգելքներ դրսից ներածվող
ապրանքների համար: Այստեղ պետք է առանձնահատուկ
կերպով շեշտել 1921 թվին հրատարակված «բեմի ուեմ-
բը», վորն իրավունք է վերապահում կառավարութեանը
կարգավորելու, ինչպէս մաքսային դրույքները, նույնպէս
և բրնձի գները:

Պետք է շեշտել, վոր բրնձի գների մեջ շահագործ-
ված են հիմնականում գյուղի կուլակային մասը և խոշոր
կալվածատերերը: Ինչպէս վերն ել շեշտեցինք, հողի
վարձակալութեան արժեքը մուծվում է մեծ մասամբ
մթերքներով: Գյուղացու ձեռքում մնացած բերքը վա-
ճառվում է տեղական շուկաներում: Այդ իսկ պատճառով
նա նորից ընկնում է «սահմանված» գնով նույն կուլակի,
կալվածատիրոջ ձեռքը, քանի վոր վերջինը և առևտրական
է և վաշխատու:

Ճապոնական բուրժուա-ֆեոդալական պետութեան
հարկային քաղաքականութիւնը նույնպէս ուղղված է
խոշոր կալվածատերերի ոգտին: Նրանցից հողային հարկը
գանձվում է 1873 թվի հողի արժեքի հիման վրա, այն
ժամանակ, յերբ այժմ հողի արժեքը 15 անգամ բար-
ձրացել է: (Յեթե 1873 թվին մի թե հողի արժեքը հավա-
սար է յեղել 40—50 իյենի, այժմ նա բարձրացել է 580
—600 իյեն գումարի), իսկ նրա փոխարեն պետական
բյուջեյի ամբողջ ծանրութիւնն ընկել է բանվորական և
գյուղացիական լայն մասսաների վրա:

Գյուղացիութեան աչքին թող փչելու համար 1917
թվին ծրագրվել է «խոշոր» ազրարային ռեֆորմ, վորն
իրականում բղխում էր միայն կալվածատերերի շահերից:
Այդ «բարենորոգութեան» ելութիւնն այն է, վոր խոշոր
կալվածատերերի ձեռքում գտնվող հողերի վորոշ մասը
վաճառվեր հողագուրկ և սակավահող տնտեսութիւններին:

Յյդ «ուեֆորմը» բնականաբար ել ավելի վատացրեց գյուղացիական լայն մասսաների դրուժյունը: Ահա ինչ է գրում այս առթիվ Ճապոնիայի ազրարային ճգնաժամն ուսումնասիրող ընկերությունն իր հրատարակած գրքում:

«Բարենորոգումը մեծ յեկամուսներ ստեղծեց իրենք կալվածատերերի համար, քանի վոր նրանք, ազատվելով վաս հողերից, պետությունից կանխիկ ստացան նրանց արժեքը, իսկ գյուղացիության համար բարենորոգումը դարձավ քայքայման ու աղիասացման աղբյուր, վարձիեցեց հողամասերն այնքան բարձր էյին գնահատվում, վոր հանախ ամբողջ բերքի արժեքը չէր բավականացնում միայն տնտեսները վնասելու համար»:

Այս դրուժյունը պերճախոս կերպով լուսաբանում է «Հոցի» թերթի 1932 թ. հունիսի 11-ի համարում սպազրված հետևյալ փաստը.—

«Միկուի գյուղում 27 սնեսություններ (ընդամենը 40-ից) 1927 թվին ստացել են պետական ճոնդից 3000-ական իյեն յեկարասեվ փոխառություն: Ամեն սարվա վնասումները հավասար են յեղել 190 իյեն գումարի: Վարկն ստանալու ժամանակ բրնձի արժեքը յեղել է 30 իյեն մի կոկուի *) համար, այժմ իջել է 17—18 իյենի: Վերջին հաշվով «նոր հողատերերն» ստիպված են յեղել ծախելու իրենց հողամասերը: Նրանց գրությունն ավելի վասացել է, քանի վոր, գրկվելով նայեվ հողից, նրանք պարտք են մնացել պետությանը՝ ստացած փոխառության համար: Վորպես արդյունք նման գրության 5 սնեսություն գաղթել են գյուղից, իսկ 10 սնեսություն խրվել են նոր պարտքերի մեջ տեղական վաճառուների մոտ»:

*) Մի կոկուն հավասար է 180 կիլոյի:

Պատկերը պարզ է: Ճապոնական բուրժուազիայի ազրարային քաղաքականությունը քանի զնում էլ ավելի վատացնում է ճապոնական գյուղի լայն աշխատավորական մասսաների առանց այն էլ չափազանց ծանր ու զրեթե անտանելի դրուժյունը:

4. ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա) ՀՈՂԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎՍՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Մենք ասացինք արդեն, վոր Ճապոնիայի գյուղատնտեսություն մեջ գոյություն ունի՝ մեկ կողմից հողի կենտրոնացում փոքրաթիվ կալվածատերերի ձեռքին և մյուս կողմից՝ նրա ծայրահեղ մանրացումը գյուղի լայն աշխատավորական մասսաների ձեռքին ու այդ մասսաների կատարյալ հողազրկումը:

«2 ու կես միլիոն սնեսություններ ունեն միայն 0,4 հեկտար սարածություն ունեցող հողամասեր, 2 միլիոն սնեսություններ—0,8 հեկտար հողամասեր»—գրում է Փարիզում հրատարակվող «Պաի Պարիզիեն» թերթի Ճապոնիայի թղթակից Անտրի Վիլիսը, թերթին սուղված իր մի թղթակցության մեջ: Դրան պիտի ավելացնել նաև այն, վոր մեկ և կես միլիոն անտեսություններ բոլորովին զրկված են հողից:

15 տարի Ճապոնիայում ապրող պրոֆեսոր Ռ. Կոնրոյը վերջերս իր «Ճապոնական սպառնալիքը» վերնագրերը կրող գրքում նկարագրում է Ճապոնիայի ներկա դրուժյունը: Կանգ առնելով ճապոնական գյուղի վրա, նա գրում է:

«Ճապոնիայի գոյության պահպանության ընթացքում, այն ժամանակ, յերբ կառավարության գլուխ կանգնած փոխամասնությունն ապրել ու մահացել է գերեհեղության սեջ, սիլիոնավորներ մահացել են սովից ու համաճարակներից: Այստեղ, հապոնական գյուղացին, չխոսելով կանանց մասին, հան-

դիսանում է ազգի հիմքը, բայց նրա նակասագիրը
չափ է սարքերում 500 սարի առաջ ունեցած
նակասագրից: Այն ժամանակ հողը պատկանում
էր նրան, իսկ այժմ նա հանդիպում է նոր սար-
քերի—կուլակին յեվ խոտոր կալվածատիրոջը յեվ
մի քան յենթակա յե հարկահավաքի հալածանքին»:
Ճապոնական գյուղացիության լայն մասսաների
դրույթները չափազանց փոքրերգական է: Հարյուր հազար
բալոր գյուղացիներ ստիպված են գնալ քաղաք աշխա-
տանք փնտնելու, ավելացնելով գործազուրկների շարքերը:

Ճապոնական գյուղում, փորտեղ իշխում է կուլակը, կալ-
վածատերը, վաշխատուն ու առևտրականը, փորտեղ գյուղա-
ցին ստիպված է իր բերքի մեծագույն մասը հանձնել կա-
պալվարձի դիմաց, փորտեղ նրա շնորհիվ գնում են պե-
տական ռազմա-ֆեոդալական, բյուրոկրատական աշխարհի
պահպանման ծախսերի ամբողջ ծանրությունը, փորտեղ
նա ընկնում է անվերջ պարտքերի տակ, գյուղացիական
լայն մասսաները բառացի սովամահության հեռանկարի
առաջ կանգնելով՝ փախչում են քաղաք՝ գործարաններում
և ֆաբրիկաներում մի ափ բրնձի համարձակաճորտատի-
րական պայմաններում, կապիտալիստական շահույթի կու-
տակման համար արյուն քրտինք թափելու:

Այդ գործարաններում ու ֆաբրիկաներում նրան
սպասում են նոր տանջանքներ: Բանվորները և բանվորու-
հիներն ընդունվում են աշխատանքի հատուկ մի քանի
տարվա տեվոգություն ունեցող պայմանագրերի համաձայն:
Պայմանագրի կետերի փոքր խախտումը կապվում է տույ-
թի հետ: Ճապոնական «Հիկարի» ամսագրի նկարագրելով
Միգուրիսի կոնցերնի հանքերում հաստատված դրույթները
բանվորներից ու բանվորուհիներից գանձվող առկթերը
բաժանում է վեց մասի:

1. Փոքր խախտման համար — աշխատավարձի կրճա-
տում:

2. Յեթե յերեք անգամ աշխատավարձը կրճատվել է,
բանվորը զրկվում է արտաժամյա աշխատանքների վար-
ձաարությունից:

3. Յեթե բանվորը հրաժարվում է աշխատել, նրան
զրկում են հասանելիք աշխատավարձից և մնդից:

4. Յեթե այդ կրկնվում է յերեք օրվա ընթացքում,
բանվորը յենթարկվում է ծեծի:

5. Յեթե բանվորը փորձում է փախչել հանքերից, նա
յենթարկվում է նախատեսված ամենախիստ պատժի:
Բանվորին մերկացնում են, կապում են ձեռքերն ու ձեռ-
քերից կախում, այնպես փոր միայն փոտքերի մատերը
կպչեն դետնին, փորից հետո սկսում են ծեծել թաց պա-
րաններով:

Ավելի վատթար պայմաններում են գտնվում կանայք
Ճապոնական գործարաններում: Տեքստիլ գործարաննե-
րում, փորտեղ բանվորության մեծ մասը կանայք են,
զլխավորապես գյուղի խորքերից յեկած, հաստատված և
ուղղակի բանտային ռեժիմ: Հանրակացարանները չըջա-
պատված են բարձր պատերով և նման են իսկական բան-
տերի: Գուրս գալ թուլյատրվում է միայն հատուկ օրերին,
այն ել վարչություն հրամանով: Բարեկամների, ծանոթների
հետ տեսակցելն արգելված է: Բանվորուհիների ամբողջ
նամակագրությունը յենթարկվում է քննության: Մտուն-
դը բաղկացած է համարյա բացառապես փոքր քանակու-
թյամբ բրնձից:

Ճապոնական «Ձի-Ձի» թերթը՝ նկարագրելով Սայցու-
մայի ջուհականոցներում տիրող դրույթները, հաստատում է,
փոր, «Ամեն ու աշխատելով առավոտյան ժամը 5-ից
մինչև յերեկոյան ժամի 10-ը, այս արհեստանոցների
բանվորուհիները սարվա ընթացքում յերեք ու հան-
գիս են ստանում: Տրված «դասը» չկատարելու համար
բանվորուհիները յենթարկվում են տույթերի, վորոնց մեջ
զլխավոր դեռ խաղում է սեռային այլասեռումը»:

Այսպես է դիմավորում կապիտալիստական քաղաքը
դյուղից յեկող բանվորին:

Իսկ ի՞նչ է կատարվում գյուղում:

Մենք վերը մատնանշեցինք, վոր գյուղատնտեսու-
թյան ներսում, հողագործության ու սակավահողության
պայմաններում, առանձնահատուկ նշանակություն է ստա-
նում վարձակալական հիմունքներով հող վերցնելու յերե-
վույթը: Գյուղական տնտեսությունների գրեթե կեսը
վարձակալական հիմունքներով հող է վերցնում (կապա-
լառու):

Ճապոնական վարձակալ գյուղացին փաստորեն կիսա-
ձորա է: Նա խոշոր կալվածատիրոջը հանձնում է իր բեր-
քի կեսից ավելին: Բացի դրանից, չքավոր գյուղացին իր
տրամադրության տակ մնացած մթերքների վաճառման
բնագավառում նույնպես կալվածության մեջ է գտնվում
նույն կալվածատիրոջից, քանի վոր շուկայի գների կար-
գավորումը գտնվում է նրա ձեռքին: Սրան պիտի ավե-
լացնել և դրամական կալվածությունը: Գյուղացին հա-
ձախ դիմում է խոշոր կալվածատերերին դրամական
ոժանդակության համար և վերցնում է նրանցից փոխա-
ռություններ ստրկացուցիչ պայմաններով:

Ճապոնական կալվածատերը վերցնում է կաղալով
տված հողի բերքի 50—60, իսկ յերբեմն 80—90 տոկոսը
մթերքով, բացի դրանից ստացված բերքի վաճառքի ժա-
մանակ ստանում է խոշոր յեկամուտներ:

Բ) ԱԳՐԱՐԱՅԻՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՊԱՏՃԱՌԱՇ

ՔԱՅՔԱՅՈՒՄԸ

Կապիտալիզմի պայմաններում չնչին փոքրամասնու-
թյան ձեռքում հարստության կուտակման հետ միասին
անդի յե ունենում խոշոր մեծամասնության, ժողովրդա-
կան լայն մասսաների աղքատացում ու քայքայում: Ապ-

րանքների առատության պայմաններում միլիոնավոր
դանդաճներ սովի ճիրաններում են գտնվում կամ ապ-
րում են կիսաքաղց դրության մեջ: Կապիտալիստներին
պատկանող գործարանները չափազանց շատ ապրանք են
արտադրում, բայց չունեն իրենց արտադրած ապրանքների
գնորդներ, քանի վոր բանվորները և գյուղացիները, վո-
րոնք կազմում են բոլոր յերկրների աղգաբնակության
ամենախոշոր մեծամասնությունը, միջոցներ չունեն յեղած
ապրանքները և մթերքները գնելու: Իրա հետևանքով
պահեստներում դիզված են ապրանքների հսկայական
պաշարներ, առաջ է գալիս դերարտադրություն ու գների
անկում, վորն իր հերթին պատճառ է հանդիսանում գոր-
ծարանների, ֆաբրիկաների, բանկերի մասնակացման ու
փակման: Փողոց են շարտվում միլիոնավոր աշխատան-
քային ձեռքեր: Հսկայական չափով վատանում է թե բան-
վորների և թե գյուղացիների դրությունը:

1929 թվին սկսված տնտեսական ճգնաժամն այդպիսի
ճգնաժամերից ամենաերկարատեր, ամենախորը և ամե-
նաքայքայիչը հանդիսացավ: Այդ ճգնաժամն ընդլրկեց
կապիտալիստական բոլոր յերկրները և տնտեսության բո-
լոր ճյուղերը (յեթե չհաշվենք ռազմական արդյունաբե-
րությունը, վորն աշխատում է պատերազմի համար):

Ճապոնիան նույնպես համակվեց ճգնաժամով:

Ճապոնիայի գյուղատնտեսությունը, վորը վերջին
տասը տարվա ընթացքում շարունակ հետ է գնում, ամենա-
խոր անկում ապրեց ճգնաժամի հետևանքով: Իրնձի և
բոժոժի գների խոշոր անկումը ճգնաժամի տարիներին
գրկեց ճապոնական գյուղացիությանը և այն յեկամուտ-
ներից, վոր նա ստանում էր «խորամալ տարիների» ընթաց-
քում:

Իրնձի գինը՝ 1929 թվին 26,8 փոսկի իյեն մի կո-
կուի համար, 1932 թվին 12,0 փոսկի իյենի: Շերամի

11-2733 297



դինը՝ 1929 թվին 100 կապոցը 1220 իյենից իջել է 1930 թվին — 855 իյենի, 1931 թվին՝ 591 իյենի և 1932 թ.՝ 419 իյենի, այսինքն՝ համեմատելով 1929 թվի հետ, իջել է յերեք անգամ:

Պարզ է, վոր նման պայմաններում և գյուղատնտեսության ընդհանուր յեկամուտը նույնպես պիտի պակասի: Ըստ տարիների — գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքի արժեքը վոսկի իյենով, արտահայտվում է հետևյալ թվերով: 1929 թվին — 3211 միլիոն վոսկի իյեն գումարից 1931 թվին իջնում է 1977 միլիոն վոսկի իյենի: Ավելի ուշագրավ է բրնձի ու շերամապահության յեկամտի անկումը: 1929 թվի բրնձի 1466 վոսկի իյեն և շերամի 606 վոսկի իյեն գումարների փոխարեն 1932 թվին իջնում է մինչև 763 և 188 միլիոն վոսկի իյենի: Ինչպես տեսնում ենք, բրնձի ընդհանուր յեկամուտը եզնաժամի առաջին տարիներին կրճատվել է 48% ով, իսկ շերամապահության յեկամուտը — 72,3%-ով:

Ստեղծվում է այնպիսի դրուժյուն, յերբ գյուղատնտեսական մթերքների գներն ավելի ցածր են, քան նրանց արտադրության ծախսերը:

«Մեր գյուղացիության դուրսյունը հիրավի վողբերգական է» — գրում է ճապոնական բուրժուական գրող Ոյադամարին 1933 թվին հրատարակած իր գրքում, «եզնաժամն ավելի խոր ու խոր մտնում է գյուղ: Արտադրող գյուղացին կրում է խեղճ վնասներ: Քաղաքում յե՞վ գյուղում գոյություն ունեցող գների տարբերությունը խեղճ է: Մի կոկու բրնձը նսում է գյուղացուն 24 իյեն, իսկ քաղաքի շուկայում նա ծախվում է 17—18 իյենի»:

Վորպես հետեվանք նման դրուժյան, ճապոնական գյուղը հասել է կատարյալ քայքայման: «Սովը վաղուց արդեն դարձել է մեր գյուղի մուայլ հյուրը»: գրում է նույն բուրժուական գրողը: Աշխատավոր գյուղացիության




լայն մասսաները սահմանափակում են իրենց, սնվում են սովորաբար թեփով, խոտերով, արմատներով և նույնիսկ դարմանով: Բայց ամենատուկալին, գյուղում գոյություն ունեցող այլասեռման յերեվոյթներին ամենասարսափելին, ինչպես գրում է Ոյադամարին,

«Յերիսասարդ աղջիկների վաճառումն է հասարակաց տների, իսկ պատանիներին — գերություն: Վաճառում են նույնիսկ փոքրահասակ աղջիկներին — նախակրթարանների աշակերտուհիներին — 3-ից մինչե՞վ 10 իյեն գնով»:

Բուրժուական թերթերը նկարագրում են շատ դեպքեր, յերբ գյուղացիները վաճառում են իրենց յերեխաներին, վոր հնարավորություն ունենան իրենց պարտքերը ծածկելու: Որինակ ճապոնական լրագրող Տոկակուրան, նկարագրելով գյուղացիության սոսկալի դրուժյունը, գրում է, վոր

«Բացարձակ անելանելիության մասնված ծնողներ վաճառում են սան մեջ ունեցած սիսկ ապրան-



իր — իրենց աղջիկը...: 350—400 իյեն գումարի փոխառեն փորձված միջնորդները գյուղի յերիսասարդ կանանց տանում են հասարակաց տները»:


Ավելի պերճախոս կերպով այս հանգամանքը նկարագրում է Ռ. Կոնրոյը մեր արդեն հիշատակած «Ճապոնական սպառնալիքը» գրքում: Մասնանշելով, Վոր գյուղական բնակչության վորոշ մասը, ապրուստն ապահովելու համար, դիմում է առևտրին, նա դրում է.

«Վորպես արդյունք նման դուրքյան, արտասովոր կերպով զարգացել է աղջիկների առեվտուրը: Իցի-գոյում գեյտաների (սպարուհիների) գնորդներն առաջարկում են նրանց համար բարձր գներ: Ներկայումս դժբախտ գյուղացին ու նրա կինը փոխանակ խնդրելու աստուց արու զավակ սալ իրենց, ինչպես առաջ եր կատարվում, խնդրում են, Վոր աղջիկ ծնվի: Այդ աղջիկ յերեխային կարելի յե վանառել նույնիսկ դեռ չծնված»:

Ծանր ու զժվարին պայմաններում է ընթանում ճապոնական գյուղացիության լայն մասսաների կյանքը: Ծայրահեղ չբավորություն և կարիքի մեջ ապրում է Ճապոնիայի բնակչության գրեթե կեսը: 30 միլիոն գյուղացիներ ապրում են, ինչպես վերն էլ շեշտեցինք, փոքրածավալ հողի կտորների վրա, մեծ մասամբ կապալով և ստրկացուցիչ պայմաններով վերցված խոշոր կալվածատերերից: Բացի կապալավարձից, վորի ծանրության մասին խոսեցինք, ճապոնական գյուղացին ծանրաբեռնված է նաև հարկերով և պարտքերով:

1914—18 թվերի իմպերիալիստական պատերազմից հետո չտեսնված չափերով ուժեղացած պետական ապարատի, բանակի և վոստիկանության պահպանման ծախսերի ծանրությունն ընկնում է բանվորության ու գյուղացիության վրա: Առանձնահատուկ կերպով ծանրանում է գյուղացիության շնքին տեղական հարկերի լուծը: Տեղական հարկերի գումարը 1880—1884 թվի 16252 հազար իյենից բարձրացել է 1929 թվին մինչև 674977 հազար իյենի: Այդ գումարի $\frac{2}{5}$ մասը կազմում են այսպես կոչված «զանազան հարկերը»: Դա սայլերի, անասունների, նավակների, ձկնորսական գործիքների վրա դրված հարկերն են: Բացի դրանից, վերցնում են նաև տնտեսության հարկ, բնակարանային, հողային և յեկամուտների հարկեր: Բնորոշ է, Վոր միևնույն հարկը գանձվում է և գավառական վարչությունների և թե ավելի փոքր շափերով գյուղական համայնքների կողմից: Յերը գյուղական լայն մասսաները վնասում են հարկ իրենց յեկամուտների 32 տկոսի սահմաններում, կալվածատերերը վնասում են միայն 13 տկոս, իսկ վաճառուները — մեկ տկոս:

Վերջին տարիների ընթացքում ճապոնական գյուղացիության պարտքերն անընդհատ ավելանում են—1932



Թվին հասնելով 7—8 միլիարդ իյեն գումարի. 1933 թվին այդ գումարն արդեն հասնում է 10 միլիարդի: Գյուղատնտեսական մթերքների արժեքը մի քանի անգամ ավելի ցածր է պարտքերի համար վճարվող տոկոսներից:

Ճապոնական գյուղացին այլևս դարձել է աննուսայի պարտատեր: Նա ծնվում է ծանրաբեռնված պարտքերի տակ և մութ, չարքաշ ու դժվարին կյանք անցկացնելուց հետո, թողնում է իր ցերեխաներին պարտքերի ավելի ծանր լուծ: Միջին հաշվով մի գյուղական տնտեսությունը հասնում է 2000 իյեն պարտք, վորից յերեք հինգերորդ մասը պատկանում է մասնավոր վաշխատուններին, մեկ հինգերորդ մասը—բանկերին և մեկ հինգերորդ մասը—վարկային և ապահովագրական ընկերություններին:

Տոկիոյում հրատարակվող «Տրանսպասիֆիկ» ամսագիրն իր 1933 թվի ոգոստոսի 17-ի համարում գրում էր՝

«Գյուղացին մեակում է իր հողը պարսֆերը վնասելու համար, աշխատում է պարսֆեր վնասելու համար յե՛վ ապրում է պարսֆեր վնասելու համար»: Գրող Ոյադամարին ի՞նչ գրքում հայտարարում է.

«Շատերին լավ հայտնի յե, վոր ամեն սի գյուղական տնտեսության պարսֆր կազմում է մի հանի հազար իյեն: Նրանք ի վիճակի չեն վոչ սիայն փակել այս պարսֆերը, այլ յե՛վ վնասել իրենց հարկերը: Մեր գյուղն այժմ գտնվում է սարսափելի դրության մեջ»:

Մխրճված պարտքերի ծանր լծի տակ, հնարավորություն չունենալով պետական հարկերը ժամանակին վճարելու, ճապոնական գյուղացին յենթարկվում է անտանելի հալածանքների: Նրա գույքը, ունեցվածքը, վաճառվում է աճուրդով և նա կանգնում է հողից զրկվելու հեռանկարի առաջ: Ահա մի քանի փաստեր:

«Կուբեյայում, Սիսան գավառում (Յյուսեյնանդո օրջանի) հառվում են վաշխատունների կողմից արժեքում բրինձը գրավելու 260 դեպք»:

Կամ «Կիյսի Հոկուդո օրջանում կալվածատերերը յե՛վ վաշխատուններն աշխատում են զանձել վարձակալներից ամբողջ պարսֆերը:

Շատ տեղերում տեղի յեն ունենում բռնագրավումներ դեռ չհավաքված բրնձի արժեքում: Բացի դրանից, Գուն-ի յե՛վ Տայկյու օրջաններում կապալավարձը բեքի 65 տոկոսից բարձրացել է սինչե՛վ բեքի 95 տոկոսը»: («Տոնգ-Սիլլա» թերթի 1933 թվի նոյեմբերի 11-ի համարից):

Միայն մի շրջանում 1933 թվին (Նագանո շրջանում) հարկերը չվճարելու համար իրենց հողերից վտարված են 7000 տնտեսություններ: Մվելանում են, մասնավորապես Կորեյայում, «գաշտերն այրողներին» թիվը: Դա


ուրիշ խոսքով այն անտեսություններն են, վորոնք հարկերը չվճարելու համար զրկվում են իրենց հողամասերից ու փախչում են անտառները, այրում են նրանց վորոշ մասն ու այսպիսով ստացված ազատ հողի տարածությունն ոգտագործում են իրենց անտեսության կարիքների համար: Սովորաբար, այդ անտեսությունները, նախ քան գյուղերից հեռանալը, այրում են վոչ միայն իրենց դաշտերը, այլ և պոմեշչիկների դաշտերը: Միայն Հեյնան-Նանդո շրջանի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, վոր յեթե «դաշտերն այրողների» թիվը 1932 թվին յեղել է 17011 հոգի, 1933 թվին հասել է 121.829 հոգու:

Անտառներում ու լեռներում, գյուղի խորքերում, ուռձանում և ցասումը բուրժուական-կալվածատիրական կարգերի գեմ:

5. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՏԱՐԻԱՏԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ըստ ճապոնական պաշտոնական տվյալների, գյուղացիության մեկ յերրորդ մասը՝ բացի գյուղատնտեսությունից, զբաղվում է նաև կողմնակի աշխատանքներով: Ճապոնական վիճակագրության տվյալների համաձայն, գյուղատնտեսական բանվորների զրությունն արտահայտվում է հատկապ թվերով:

	Տղամարդիկ	Կանայք	Յերեխաներ	Ընդամենը
1. Մշտական գյուղատնտեսական բանվորներ	238.001	140.074	6.861	384.039
2. Սեզոնային գյուղատնտեսական բանվորներ	460.748	447.632	11.326	919.709
3. Որովաբձային գյուղատնտեսական բանվորներ	1.069.361	728.217	14.729	1.819.940
Ընդամենը	1.768.680	1.315.923	32.979	3.117.582



Ինչպես տեսնում ենք, աչքի յե զարնում այն հանգամանքը, վոր կանանց յեվ յերեխաների մասնակցությունը չափազանց բարձր է: Դա բացատրվում է նրանով, վոր վերջինների աշխատանքը վարձատրվում է շատ ավելի ցածր վարձով, քան տղամարդկանց աշխատանքը: այդ հանգամանքն արձանագրում է նայել մի ամերիկյան միտիոններ, ճապոնական գյուղում կատարած մի այցելության առթիվ:

«Մենք այցելեցինք նրանց սներ, ասում է նա, — հասակի փոխաբեմ հող, պատահաններ չկան յեվ յույսը մեծում է դոնից: Սենյակում կանկարաաիք գոյություն չունի, չկան վերմակներ, նրանց փոխաբեմում է իոսք: Յերեվում են մի քանի հողե ամաններ: Յեվ ամբողջ սրեսետությունը դա յե: Սյս ամբողջ դժբախտ ժողովուրդը ձգում է աշխատանքի, բայց ցանքը վերջանալուց հետո նրանք աշխատանք չունեն: Չմեղը նրանք անսառնայութ են փոխադրում յեռներից մինչեվ յերկաթուղու կայարանը: 12 ժամվա աշխատանքի համար նրանք ստանում են սիայն ճառ, սղամադրիկ 7—8 սին, իսկ կանայք 3 սին աշխատավարձ (սի սինը կես

կոպեկից պակաս է): Անհասկանալի յե, թե ինչպես
նման պայմաններում կարող են ապրել այս մարդկա-
յին էյակները»:

*Միլիոնավոր մարդկանց ապրելու պայմաններն անընդ-
հատ վատանում են: «Ճապոնական ժողովրդի մեծամաս-
նության ապրելու մակարդակը չհավորի կյանքից ավելի
ցածր է», գրում է «Ոսակա Մայնիցի» թերթը:*

*Հոգեվարքի մեջ ապրող ճապոնական գյուղում կուտակ-
վում են քաղաքի պրոլետարիատի պահեստի բանակները:
Գյուղատնտեսական բանվորությունը, քաղաքի պրոլետա-
րիատի անմիջական ղեկավարությունը և դաշն կապած գյուղի
լայն աշխատավորական մասսաների հետ, վտար յե կանգ-
նում ճապոնական բուրժուազիայի և ավատապետության
մնացորդների դեմ:*

*Կուտակվում են փոթորկի ամպերը սովամահության
դուռը հասած գյուղի վրա, գյուղացիների առաջ գծագրվում
են այդ սովամահությանից ազատվելու միակ հեղափոխա-
կան ճանապարհները:*

*Գլուխը կորցրած ճապոնական ռազմատեսչ ըուրժուա-
զիան իր հերթին նույնպես փորձում է ցույց տալ ճապո-
նական գյուղի «փրկության» ճանապարհները:*

Տեսնենք ինչ է նա առաջադրում ճապոնական գյուղին:

6. ՃԱՊՈՆԱԿԱՆ ԽՊԵՐԻԱԼԻՋՍԸ ՀԱՄԱՇՆԱՐՅԱՅԻՆ ՆՈՐ ՊԱՏԵՐԱԶՄ Ե ՀՐԱՎՐՈՒՄ

*Յերբորդ տարին է, ինչ ճապոնական իմպերիալիզմը գրա-
վել է Մանջուրիան: Ճապոնական իմպերիալիստները փորձում
են համոզել Ճապոնիայի լայն ժողովրդական մասսաներին,
վոր Մանջուրիան և Մոնղոլիան կենսական անհրաժեշտու-
թյուն են Ճապոնիայի համար, վոր առանց նրանց նա չի
կարող բարելավել յերկրի ժողովրդի դրությունը:*

*Պատճառաբանելով, վոր յերկրի բնակչության թիվը
չափազանց մեծ է յեվ հողը քիչ, նրանք ուզում են ա-
րտադրել ժողովրդական լայն մասսաների սովամահու-
թյունն ու փորձ են անում նրանց հավասացնել, վոր լայն
աշխատավորական մասսաների սովից փրկվելու նախա-
պահը— դա նոր յերկրների գրավման նախապահն է:*

*Բայց ճապոնական բանվորությունը և գյուղացիությունը
տեսնում են, վոր նրանք սովամահ են լինում վոչ թե նրա
համար, վոր Ճապոնիայում շատ ժողովուրդ կա և քիչ բրինձ,
վոր չի բավականացնում բոլորին կերակրելու համար, այլ
նրա համար, վոր բազմաթիվ յեվ գյուղացին չունեն հնա-
րավորություն այդ բրինձը գնելու, (բրինձը հանդիսանում
է Ճապոնիայի լայն ժողովրդական մասսաների հիմնական
մուտնը): Նրանք գիտեն, վոր Չինաստանի վրա կատարվող
հարձակումը, Մանջուրիայի գրավման պատճառը, բոլորովին
այլ է:*

Ա). ԻՆՉ ՅԵՐԿԻՐ Ե ՄԱՆՉՈՒՐԻԱՆ

*Մանջուրիան գտնվում է Չինաստանի հյուսիս-արեւել-
յան կողմում: Հուսիսից նա սահմանամերձ է Սորերդային
Միությունը, արեւելքից՝ Ս. Միությունը և Ճապոնիային
(Կորեայի միջոցով), արեւմուտքից — Մոնղոլիային յեվ
հարավից՝ Ինդին ծովին: Իր այս սահմաններում նա ունի
950.000 քառ. կիլոմետր տարածություն, այսինքն ավելի
մեծ է Ճապոնիայից և նրա գաղութներից 268,000 քառ.
կիլոմետր տարածությամբ: Ունի 27,5 միլիոն բնակչություն,
վորի խոշորագույն մասը չինացիներ են: Բնակչությունը
հիմնականում զբաղվում է հողագործությամբ, վորը տալիս
է տարեկան 9,5 միլիոն տոնն հացահատիկային կուլտուրա-
ներ. զարգացած է նաև անասնապահությունը: Ունի զգալի
չափով անտառային և հանքային հարստություններ: Քարա-
ծուխ տաքվում է հարավային Մանջուրիայում: Ունի գյուղա-
տնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերություն:*

Մանջուրիայից արտածվում են հացահատիկային կուլտուրաներ, մետաքս, կաշիներ, մետաղներ, ալյուր, անասուններ: Ներածվում են տեքստիլ և մետաղյա գործվածքներ, պատրաստի հագուստներ, ծխախոտ և այլ ապրանքներ:

Մանջուրիայի խոշոր քաղաքներն են՝ Սարբինը—365,000 բնակչությամբ, Մուկդենը՝ 150,000 բնակչությամբ, Գիրինը, Չանչունը, Անդունը:

Ինչ 19-րդ դարի վերջերից Մանջուրիան դառնում է միապետական Ռուսաստանի իմպերիալիստական ձգտումների առարկան: Ռուսական իմպերիալիզմը փորձում է հաստատել իր տիրապետությունը Հեռավոր Արեւիքում: Այդ քաղաքականության զեմ հանդես է գալիս Ճապոնական իմպերիալիզմը: Այդ հակամարտությունից առաջ է գալիս ուսուցանական պատերազմը (1904—1905 թվականներին), փորի մեջ, ուսական ցարիզմին հաղթելու հետեւանքով, Ճապոնիան ամրացնում է իր ազդեցությունը հարավային Մանջուրիայում: 1914—18 թ. իմպերիալիստական պատերազմի ընթացքում միապետական Ռուսաստանի ազդեցությունը Մանջուրայում զգալի չափով թուլանում է ի հաշիվ ճապոնական ազդեցության ուժեղացման:

Ճապոնիան չափազանց շատ շահագրգռված էր Մանջուրիայով, քանի վոր նա հանդիսանում է հարուստ հումույթի բազա, վորն ի վիճակի յե բավարարելու նրա անխի, նավթի, յերկաթի, գյուղատնտեսական մթերքների պահանջները: Միաժամանակ Մանջուրիան հանդիսանում է ճապոնական դրամազուխները ներդրման խոշոր շուկա:

Ռազմական տեսակետից Մանջուրիան ապահովում Ճապոնիայի թիկունքը Մ. Նահանգների պատերազմի դեպքում յեվ հանդիսանում է հարմար ուղիմազառ Չինաստանը նվաճելու կամ Ս. Միության զեմ պատերազմելու ծրագրերն իրագործելու համար: Առանց այս փաստերին ծանոթ

լինելու չի կարելի հասկանալ ճապոնական իմպերիալիզմի ուղիմառնչ իմպերիալիստական քաղաքանությունը և Ճապոնիայի պատերազմը Չինաստանի դեմ:

Բ).ՃԱՊՈՆԱԿԱՆ ԻՆՏԵՐՎԵՆՅՈՒՆ ՄԱՆՉՈՒՐԻԱՅՈՒՄ

1931 թվի սեպտեմբերի 18-ին, հանկարծակիորեն, առանց վորեվ նախազգուշացման, ճապոնական զորքերը, 6 ժամվա ընթացքում, ուբակոծության յենթարկելով Մանջուրիայի կենտրոն Մուկդեն քաղաքը, գրավեցին այն և այսպիսով ձեռնարկեցին Մանջուրիայի գրավմանը: Նրանցից հետո ճապոնական իմպերիալիզմը մեկը մյուսի հետեւից գրավում է Մանջուրիայի բոլոր քաղաքները և 1932 թվի սկզբին ներխուժում է նայել հյուսիսային Չինաստանի խորքերը:

Գրավելով և հնազանդեցնելով իրեն Մանջուրիան և հյուսիսային Չինաստանը, ճապոնական իմպերիալիզմը գրավում է բանկերի արժեքները, կողոպտում է բնակչությունը, թալանի յե յենթարկում չինական հաստատությունները, ձգտելով նման միջոցներով հաստատելու իր տիրապետությունը Չինաստանից պոկված յերկրամասերում:

Ինչպիսի հաշիվներ ու ծրագրերն ունեյին ճապոնական իմպերիալիստները, նեովելով պատերազմի. Հեռավոր Արեւիքում: Նրա հաշիվներն ու պլանները կարելի յե ամփոփել հետեւյալ ձեւով:

Առաջին.— Պատերազմը Չինաստանում, ըստ ճապոնական ուղիմառնչ բուրժուազիայի կարծիքի, պիտի յսթան հանդիսանար ազգայնական տրամադրությունների ուժեղացման լայն ժողովրդական մասսաների մեջ և այսպիսով պիտի նպաստեր հեղափոխականացման յենթարկվող մասսաների ուղղորդությունը հեռացնելու նրանց ծայրահեղ կարիքի ու չքավորության իսկական պատճառից:

Յերկրորդ.— Ռազմական զրուեթյունը հնարավորություն եր ստեղծում ել ավելի ուժեղացնելու տերրորը ճապոնական պրոլետարիատի և գյուղացիութեան հեղափոխական շարժման գեմ, ել ավելի ուժեղացնելու նրանց անգութ շահագործումը: Այդ պայմաններում ճապոնական ռեակցիան յենթադրում եր վոչնչացնել ամբողջովին Ճապոնիայի աշխատավորական մասսաների ավանգարդ—կոմունիստական կուսակցությունը:

Յերրորդ.— Գրավելով Մանջուրիան և հյուսիսային Չինաստանը, Ճապոնիայի տիրապետող դասակարգերը ծրագրում են ստեղծել իրենց համար հումուլթի և վաճառահանման նոր շուկաներ, տանյակ միլիոն աշխատավորական լայն մասսաների շահագործման նոր հնարավորություններ:

Չորրորդ.— Մանջուրիայի և հյուսիսային Չինաստանի մի մասի գրավումը անհրաժեշտ են ճապոնական ինտերվենտներին նրա համար, վոր ամրացնի նրանց դիրքերը խաղաղ Ովկիանոսի ավազանում և ասիական ցամաքի վրա ու նպաստի այդ շրջաններից այլ խմբերիալիստական պետութայունների ազդեցութեան թուլացմանը և դուրս շարժմանը:

Հինգերորդ.— Գրավելով Մանջուրիան, ձեռնարկելով հյուսիսային և կենտրոնական Չինաստանում ռազմական գործողութայունների, ճապոնական իմպերիալիզմը ծրագրում ե ստեղծել ռազմադաշտ Խ. Միութեան գեմ, սոցիալիզմի յերկրի գեմ հարձակվելու համար:

Վեցերորդ.— Ռազմական գործողութայունները Չինաստանի գեմ վերջապես անհրաժեշտ եյին պայքար կազմակերպելու համար Չինաստանում ուժեղացող կոմունիզմի գեմ, մանավանդ չինական խորհուրդների որսուղի ծավալվող ազդեցութեան գեմ:

Ճապոնական իմպերիալիզմի այդ նպատակները դեռ վաղուց շատ ցայտուն և բացահայտ կերպով շարադրել ե

ճապոնական ռազմական շրջանակների ներկայացուցիչ գեներալ Տանական—Թագավորին ուղղված իր գեկուցագրի մեջ: Ահա մի կտոր այդ գաղտնի գեկուցագրից, վոր վերջին տարիներս միայն հրատարակվեց և ընդհանուրի սեփականութայունը դարձավ:

«Ճապոնիան չի կարող հեռացնել դժվարութայուններն արեվելյան Ասիայում, յեթ չկիրառի կյանում արյունի յեզ յերկաթի փողափականութայունը:.... Այսուհետեզ մենք պե՛տ ե հետապնդենք ռազմական նպատակներ յեզ գրավենք նախապահներ—Մանջուրիայի յեզ Մոնղոլիայի սիրքը, այն պարզ պատհանով, վոր հնարավորութայուն ունենանք մեկ կողմից կանգնեցնելու Չինաստանի ռազմական, փողափական յեզ սնեսական զարգացումը, իսկ մյուս կողմից կանգնեցնելու ռուսական ազդեցութայունի սարածումը: Ահա մեք ցամաքային փողափականութայունի բանալին:»

Գեներալ Տանական Չինաստանով ել չի բավականանում. նա շարունակում ե .—

Այդ «Բանալին» անհրաժեշտ ե, վոր հնարավոր լինի Չինաստանի բոլոր ռեսուրսները ձեռքի տակ ունենալով «անցնելու Հեղկաստանը, փոքր Ասիան, կենտրոնական Ասիան յեզ նույնիսկ Յեվրոպան» նվաճելու աշխատանքներին:

Ինչպես տեսնում ենք, իրենց գլուխը կորցրած ճապոնական իմպերիալիստները ախորժակները չափազանց գրգռված են: Բայց իրենց այս ծրագրի իրագործման ճանապարհին նրանք տեսնում են մի խոշոր արգելք: Դա Խորհրդային Միութայունն ե: Իր գեկուցագրում նույն գեներալը գրում ե:

«Մեք ազգային զարգացման ծրագրի մեջ, ըստ յերեվույթին, մե՛նում ե հյուսիսային Մանջուրիայում Ռուսաստանի հետ սեր տերի խաչտանվումը...»

«Յերե մենք դիտենք ձապոնիայի ապագան, մենք պետք է ընդունենք հյուսիսային Մանջուրիայի դատարարական Ռուսաստանի հետ պատերազմի անխուսափելիությունը:»

Իր այս ծրագրերներն իրագործելու համար ձապոնական իմպերիալիզմը անհրաժեշտ պատրաստվում է պատերազմի: Նա ուժեղացնում է իր զորքերի քանակը Մանջուրիայում, կառուցում ենուր յերկաթուղիներ, ստեղծում է ինքնաթիռներ, շարժաններ, ուժեղացնում է իր ուղային ու ծովային նավատորմի զորքը: Այդ պատերազմական պատրաստությունները նկարագրեցին ընկերներ Վորոշիլովը և Բյուրխերը կուսակցության 17-րդ համագումարում: ձապոնիայի սահմանական բյուջեն կհանում է ձապոնիայի լայն աշխատավորական մասսաների վերջին կոպեկները:

Բոլոր յերկրների բանվորների ու գյուղացիների «իրելի առաջնորդ ընկ. Մտալինը, կուսակցության 17-րդ համագումարում» վերլուծելով կապիտ. աշխարհում պատերազմի ծագման հավանականությունները, առանձնահատուկ կերպով կանգ առավ Չինաստանը նվաճելու համար մղվող պատերազմի և Խորհրդային Միության դեմ նախապատրաստվող պատերազմի հավանական հետեվանքների վրա: Այստեղ ամբողջովին մեջ ենք բերում նրա խոսքերն այդ մասին:

«Կարծում ենք թե պատերազմը հարկավոր է կազմակերպել ռազմական տեսակետով բույլ, բայց ռուսիայի իմաստով ընդարձակ յերկրներից մեկն ու մեկի, որինակ Չինաստանի դեմ, վորը, բանից դուրս է գալիս, չի յել կարելի բառիս իսկական իմաստով պետություն անվանել, այլ ներկայացնում է լոկ «չկազմակերպված տերիտորիա», վորը կարիք ունի, վոր ուժեղ պետություններն իրեն գավթեն: Նրանք, ըստ յերեվույթին, ցանկանում են վերջնականապես բաժանել այդ յերկիրը յեվ ռսկել իրենց գործերը նրա հաշվին: Յենթադրենք

թե նրանք այդպիսի պատերազմ կազմակերպեցին: Նրանից ինչ կարող է ստացվել: Հայտնի յե, վոր 19-րդ դարի սկզբին հիստ այդպես էլին նայում Խալիայի յեվ Գերմանիայի վրա, ինչպես այժմ նայում են Չինաստանի վրա, այսինքն՝ համարում էլին «չկազմակերպված տերիտորիաներ» յեվ վոչ թե պետություններ յեվ ստեղծվում էլին նրանց: Իսկ դրանից ինչ ստացվեց: Դրանից, ինչպես հայտնի յե, ստացվեց Գերմանիայի յեվ Խալիայի պատերազմ այդ յերկրների անկախության յեվ վորպես ինքնուրույն պետություններ միավորելու համար: Դրանից ստացվեց ասեություն ուժեղացումն այդ յերկրների ժողովուրդներին ստեղծվողների դեմ, վորի արդյունքները մինչև այժմ դեռ յեվս վերացված չեն յեվ թերեվս դեռ ռուսով չեն վերացվի: Հարց է ծագում՝ վորն է այն յերաշխիք, վոր նույնը չի ստացվի Չինաստանի դեմ իմպերիալիստների պատերազմի հետեվանքով:»

«Վերջապես, չորրորդները նկատում են, վոր պատերազմը հարկավոր է կազմակերպել ԽՍՀՄ-ի դեմ: Նրանք մտածում են ջախջախել ԽՍՀՄ-ն, բաժանել նրա տերիտորիան յեվ ռսկել նրա հաշվին: Սիսակ կլինեք յենթադրել, թե այսպես են մտածում ձապոնիայի վորոշ ռազմական քաղաքները սիսակ: Մեզ հայտնի յե, վոր այսպիսի պլաններ որոշում են Յեվրոպայի մի քանի պետությունների քաղաքական դեկադաների քաղաքներում: Յենթադրենք, թե այս պարոնները խոսքից անցան գործի: Նրանից ինչ կարող է ստացվել: Հագիվ թե կարելի յե կասկած հայտնել, վոր այս պատերազմը կլինի բուրժուազիայի համար անհավանական պատերազմը: Այն կլինի ամենազանգվածային վոչ միայն նրա համար, վոր ԽՍՀՄ-ի ժողովուրդները մահու

կոիվ կմդեն հանուն հեղափոխության նվաճումների։ Այն ասենալանգաւորը կլինի բուրժուազիայի համար նայել այն պասնառով, վոր պասերազմը տեղի կունենա վոչ միայն հակասներում, այլե՛վ հակառակորդի քիկուններում։ Բուրժուազիան կարող է չկասկածել, վոր ԽՍՀՄ-ի բանվոր դասակարգի բազմաթիվ բարեկամները Յեփրոպայում ու Ասիայում կաշխատեն քիկունից հարվածել իրենց նկողմներին, վորոնք ձեռնարկել են վոնրագործ պասերազմըն ընդդեմ բոլոր յերկրների բանվոր դասակարգի հայրենիքի։ Յե՛վ թող մեզնից չգժգոհեն պարոնայք բուրժուաները, յեթե իրենք այլպիսի պասերազմի հետեյալ որք գոյություն ունեցողների թվում չզսնեն իրենց մոտիկ կառավարություններից մի քանիսին, վորոնք այժմ բարեբասիկ կերպով թագաւորում են «աստու վոդորմությամբ» (ծափերի տարափ)։ Այդպիսի սի պասերազմ ԽՍՀՄ-ի դեմ սողեն յեղել է, յեթե հիշում եմ, սրանից սի 15 տարի առաջ։ Ինչպես հայտնի յե, բոլորի կողմից հարգված Չերչիլն այն ժամանակ այդ պասերազմին սվեց «14 պետությունների արեալանք» բանաստեղծական Քորմուլլ, Դուր, ի հարկե, հիշում եմ, վոր այդ պասերազմը մեր յերկրի բոլոր աշխատավորներին համախմբեց անձնավեր մարտիկների մի միասնական բանակի մեջ, — մարտիկներ, վորոնք իրենց կրծքով պաշտպանեցին իրենց բանվորագյուղացիական հայրենիքն արեալին քեհասիներից։ Դուր գիտեմ, թե այն ինչով վերջացավ։ Այն վերջացավ ինտերվենսներին մեր յերկրից վորնտեղով յե՛վ Յեփրոպայում հեղափոխական «գործողության կոսիտներին» ստեղծումով։ Հազիվ թե կարելի յե կասկածել, վոր ԽՍՀՄ-ի դեմ յերկրորդ պասերազմի հետեվանքը կլինի հարձակվողների լիակատար պարտությունը, հեղափոխություններ Յեփրոպայի ու

Ասիայի մի շարք յերկրներում յե՛վ այդ յերկրների բուրժուա-կալվաճախիական կառավարությունների ջախջախումն։

(ՄՏԱԼԻՆ, XVII համազումարի գեկուցումից)։

Նոր համաշխարհային պատերազմի հրդեհը բոցավառվում է Խաղաղ ովկիանոսի ավազանում։ Ճապոնական ռազմատենչ զինվորականութունն իր նվաճողական քաղաքականության կիրառամբը վոտնակոխ է անելու միլիոնավոր աշխատավորական մասսաների իրավունքները Չինաստանում։ Չինաստանի իշխող դասակարգերը, չինական կալվածատիրության և բուրժուազիայի Գոմինդան կուսակցութունը ճանապարհ են հարթում ճապոնական իմպերիալիստների առաջ։ Միայն Խորհրդային Չինաստանն է անվտի կոիվ հայտարարում ամեն տեսակ իմպերիալիստական ինտերվենցիայի։ Բայց ամուր չե նաև ճապոնական իմպերիալիզմի թիկունքը։ Ճապոնական բանվորութունը, ճապոնական գյուղացիության լայն մասսաները կոմունիստական կուսակցության գլխավորությամբ հրապարակ են գուրս գալիս իրենց սեփական իմպերիալիզմի իշխանութունը տապալելու, բուրժուական, կալվածատիրական կարգերի լուծը տապալելու համար։

Վառվում են հեղափոխության կրակները ճապոնական գյուղում, բոցավառվում է քաղաքի պրոլետարիատը, ուժեղանում են կոմունիստական բջիջները բանակում, վորը վաղ թե ուշ իր գենքն ուղղելու յե իր գեներալների գեմ։

7. ԿՍՏԵՆՄՎԻ ԲԱՆՎՈՐԱԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՃԱՊՈՆԻԱ

Մանջուրիայի գրավման հենց առաջին որերից ճապոնիայի կոմունիստական կուսակցութունը շարունակ ճապոնիայի աշխատավորության առաջ մերկացրել է ճապոնական իմպերիալիզմի ռազմական ավանաշուրանների քաղաքականութունը։

Մուկղենի գրավման յերկրորդ որը հրատարակված մի կաշում նա գրում էր.

«Բանվորներ, գյուղացիներ յե՛վ բանակայիններ: Ճապոնական բուրժուազիան կասաել է Մանչուրիայի գրավման առաջին փայլը: Դա յերբեք չի հանդիսանում «ինկնապաշտանության» կամ «անսպասելի դեպքի» արդյունք: Ճապոնիայի յերուրբը— դա նապոնական իմպերիալիզմի մարտահրավերն է, ուղղված նապոնական յե՛վ չինական պոպեստի յե՛վ աշխատավորական մասսաների, ինչպես նայել խորհրդային Միության աշխատավորական մասսաների դեմ»:

Կոչը վերջանում է հետեվյալ խոսքերով.—

«Բանվորներ, գյուղացիներ յե՛վ բանակայիններ: Վոսխի յե՛լեք բնդհանուր պայքարի Չինաստանի բանվորների, գյուղացիների յե՛վ բանակայինների հետ միասին:

Կո՛վեցե՛ք նապոնական իմպերիալիզմի յե՛վ նրա ռազմական գործողությունների դեմ, վորոնք ուղղված են հեղափոխական Չինաստանի դեմ:

Կո՛վեցե՛ք նոր իմպերիալիստական պատերազմի վսանգի դեմ, հեղափոխական Չինաստանի պաշտպանության, չինական կարմիր բանակի ոգնության, և Միության պաշտպանության համար:

Կորչի իմպերիալիստական Ճապոնիան:

Կեցցե՛ք Խորհրդային Ճապոնիան:»

Յե՛վ ճապոնական կոմկուսակցության գլխավորութամբ ծավալվող հակապատերազմական աշխատանքը առլիս է իր արդյունքները: Չինաստանում գործող ճապոնական բանակում, բանակ, վորը բաղկացած է սովաժանության մասնված գյուղի ղավակներից, ավելի ու ավելի բարձր է հնչում բողոքի, ընդվզումի ձայնը: Չնայած գոյություն ունեցող խիստ ռազմական գրաքննությանը

վորը գաղտնի յե պահում զինվորական ապստամբությունների լուրերի տարածումը, վերջիններն արգեն դարձել են Ճապոնիայի լայն աշխատավորական մասսաների սեփականություն:

Նրանք գիտեն, վոր կովից հրաժարվելու համար Թուշունի քաղաքում գնդակահարված են 300-ից ավելի զինվորներ, վոր Շանհայի ճապոնական զորքերի մի մասը վերադարձվեց հայրենիք «անհուսալի» լինելու հետևանքով: Նրանք գիտեն, վոր Տոկիոյի գավառում ձերբակալված յե՛վ գնդակահարված են 12 յերիտասարդ սպաններ, վոր ձերբակալություններ են տեղի ունեցել նաև ճապոնական բանակում, վոր հայտնաբերվել էր ուժեղ հեղափոխական կազմակերպության կորեյայում կենտրոնացված ճապոնական բանակում, վոր ձերբակալվել ու բանտարկվել են ռազմական նավատորմի բազմաթիվ նավատիրներ իրենց կոմունիստական գործունեյության համար:

Ճապոնական կոմկուսակցությունը, վորի անդամներից ու համակրողներից վերջին յերեք տարիների ընթացքում բանտարկվել և սպանվել են 30 հազար հոգի, հերոսաբար կազմակերպում են հակապատերազմական աշխատանքը ճապոնական բանակում: Չնայած բանակում գոյություն ունեցող ամենադաժան սեփմին, այդ գործունեյությունը կենտրոնացվել է հիմնովին կազմակերպված գաղտնի զինվորական կոմիտեների ձեռքում:

Ճապոնիայում ու Չինաստանում, ճապոնական բանակի հեղափոխական զինվորական կոմիտեները լայնորեն տարածում են կոմունիստական կուսակցության կոչերը: Բերում ենք այդ կոչերից մեկում տպագրված լողունները:

«Ընդդեմ Չինաստանի նվաճողական պատերազմի: «Ընդդեմ չինական խորհուրդների յե՛վ չինական կարմիր բանակի վրա հարձակվելու»:

«Հանուն Չինաստանի նվաճելու պատերազմը միջազգային հեղափոխական պատերազմի վերածելու»:

«Ուղղեցե՛ք ձեր գեներեր հապոնական կապիտալիստների յե՛վ կալվածատերերի դեմ»:

«Հանուն Խորհրդային Միության պաշտպանության»:

«Կեցցե՛ ձապոնիայի յե՛վ Չինաստանի բանվորների, գյուղացիների յե՛վ զինվորների համերաժիսությունը»:

Պայքարը ճապոնական իմպերալիզմի տիրապետությանը տապալելու համար տեղի յե ունենում թե ֆրոնտում, թե բանակում և թե յերկրի ներքում:

Սովամահուկության մատնված և քայքայված ու այլատեսման յենթարկված ճապոնական բանվորության ու գյուղացիության լայն մասաները պայքարում են իրենց գրուկյան բարելավման համար: Քաղաքներում ծավալվում և գործադուլային շարժումը: Յեթե 1932 թ. անասնելի տերրորի պայմաններում քաղաքներում տեղի յեն ունեցել 1926 գործադուլներ 100 հազար մասնակիցներով, ապա 1933 թվի միայն առաջին յեռամսյակում յեղել են 500-ից ավելի գործադուլներ 35.000 մասնակիցներով: Տնտեսական գործադուլների հետ միասին տեղի յեն ունենում և զարգանում են քաղաքական գործադուլներ պատերազմի դեմ, արհմիությունների ճանաչման համար, այլ և քաղաքական պահանջների իրականացման համար:

Բանվորների պայքարի զարգացման հետ միասին զարգանում և ու ծավալվում գյուղացիական շարժումը: Ծավալվում են գյուղացիական կոնֆլիկտները: Միայն 1932 թ. տեղի յեն ունեցել 3000-ից ավել կոնֆլիկտներ վարձակալների և կալվածատերերի միջև: Գյուղացիները պայքար են մղում վոչ միայն կալվածատերերի-վաչ-

խառուների դեմ, այլ նաև վոստիկանական կամայականությունների դեմ: Բազմաթիվ են գինված ապստամբությունները, ընդհարումները վոստիկանություն, զորքի և կալվածատերերի գինված շոկատների հետ: Գյուղացիությունը պայքարում և վոչ միայն վարձակալության պայմանների բարելավման համար, նա աստիճանաբար սկսում և հրապարակի վրա գնել նաև ճապոնական հեղափոխության հիմնական խնդիրները, ինչպիսին և հողը աշխատավոր գյուղացիական լայն մասաներին հանձնելու խնդիրը, և գործնականում պայքարել նրա իրականացման համար:

Ահա մի քանի որինակներ, յերբ ճապոնական բուրժուազիայի թերթերն իրենք վկայում են գյուղացիության հեղափոխական շարժման աճման մասին:

«Չուսին Իլո» թերթը 1933 թվի նոյեմբերի 12-ի համարում գրում է, վոր—

«Նոյեմբերի 11-ին ավարտվել է Կոգինի գյուղացիական ապստամբությունների ֆենուրյունը: Քենուրյունը շարունակվել է յեղու սարի»:

«Կանկե-նանդո շրջանում, 70 սեղ ծագել են գյուղացիական ապստամբություններ, վորոնց ընթացում սեղի յեն ունեցել ցույցեր, հրդեհներ յեվ բալան: Ապստամբ գյուղացիներն այրել են կալվածատերերից խլված սի ֆանի սանյակ հազարի փասսարդեր: Գյուղացիական միությունների 2000 անդամներից ձերբակալված են յեղել 310 հոգի: Գոսսախապության հանձնված են արդեն 131 հոգի»:

Կամ

«Տակաոկոյում 3000 գյուղացիներ գրոհել են պասարանի յեվ բանսի շեններ»:

Կամ

«Մինամի Կամբարա գաժառի ընդհարումները վերջացել են վարձակալների հաղթանակով: Վար-

ձակալներն ստեղծել են իրենց միությունը յեվ հույնիսկ ստեղծել են կանանց յեվ յերեսաների սեկցիաներ»:

Այն, ինչ վոր կատարվում է այսօր ճապոնական գյուղում — սովի ու ջրավորության ծավալումը, գյուղի այլասեռումը և քայքայումը, հանդիսանում է նոր, ավելի խորը հեղափոխական դեմքերի նախերգանքը: Իր գլուխը կորցրած ճապոնական բուրժուազիայի սաղմա-ֆաշիստական խմբավորումները փորձում են ներքին ճգնաժամային դրությունից յեղբ գտնել արտաքին ավանտյուրանների մեջ: Այս հանգամանքը մտածեցնում է հեղափոխական ճգնաժամը յերկրի ներսում:

Ճապոնիայի կոմունիստական կուսակցությունն իր հերոսական աշխատանքով նախապատրաստում է այդ հեղափոխության հաղթանակը:

Ահա թե ինչ ասաց Ճապոնիայի կոմունիստական կուսակցության աշխատանքի մասին ընկ. Մանուիլսկին կուսակցության 17-րդ համագումարում:

«Բուրժուական մամուլի մեջ թափանցող վոչ լրիվ տվյալների համաձայն, միմիայն 9 ամսում Ճապոնիայում ձերբակալվել է մոտ 8 հազար կոմունիստ և այնուամենայնիվ մի ձերբակալվածի փոխարեն Ճապոնիայում հրապարակ են գալիս կոմունիստական տասնյակ նոր ուժեր:

Ճապոնական կոմկուսը դաստիարակում է բուշեիկյան պողպատակուռ սերունդ: Մի յերիտասարդ կոմյեբրիտուհի վեց շաբաթ շարունակ խոշտանգումների յենթարկվելով, վոչ միայն ցուցմունքներ չի տվել, այլ յեվ ի գարմանս վոստիկանների և դահլիճների, վոչ մի հառաչ չի արձակել, վոչ մի խոսք չի արտասանել: Ճապոնական կոմկուսը յերկրում անվեհեր պայքար է մղում Չինաստանում տեղի ունե-

ցող պատերազմի դեմ: Նա կոմիսսներնի վորոշ սեկցիաների համար հանդիսանում է բուշեիկյան մասսայական աշխատանքի որինակ, վերարտադրելով ամենայն մանրամասնությամբ մեր կուսակցության աշխատանքի ձևերը, յերբ նա անլեզու վիճակումն էր: Վերջին ժամանակներս չափազանց ուժեղացել է կոմունիստների ակտիվությունը սաղմական ձեռնարկություններում: Մի քանի տարվա ընթացքում չնայած հսկայական ճախողումների, կուսակցության կենտրոնական որդան «ՄեկկիՆ» («Կարմիր Իրոզակ») շրագարեց լույս տեսնելուց: Կուսակցությունը հրատարակում է դինվորների համար «Ջինվորի բարեկամ» թերթը, կորեյում մի թերթ նավաստիների համար, հրատարակում է մի գյուղացիական թերթ: Իրանք լի յեն Ճապոնիայի գործարաններից, զորանոցներից ու գյուղերից ստացվող թղթակցություններով: Հիանալի հիմքերի վրա դրված գործարանային թերթերի մի ամբողջ ցանց լրացնում է ճապոնական կոմկուսի աշխատանքի այդ պատկերը: Իրժվար է առանց խոր հուզմունքի կարգալ այդ թերթերը, վորոնց ամեն մի խոսքը շնչում է պրոլետարական գայրույթով ընդգեմ շահագործման և յենինյան ու ստալինյան պայքարով ընդգեմ իմպերիալիզմի ու պատերազմի:

Ովքեր են նրանք, վորոնց անվանում են մանջուրական բանդիտներ, գրում է Միցուբուի (Ճապոնիայի յերկու ամենախոշոր կապիտալիստական միավորներից մեկը) գործարանում լույս տեսնող գործարանային այդ թերթերից մեկը — դրանք մեր յեղբայրներն են, չին բանվորներն ու գյուղացիները, վորոնք պայքար են մղում ճապոնական իմպերիալիզմի յնտերվենցիայի դեմ:

Ճապոնական իմպերիալիզմն արշավում է Չինաստանում արդեն ստեղծված խորհուրդների դեմ և հարձակում է ծրագրում Խորհրդային Միության՝ մեր պրոլետարական հայրենիքի դեմ... Իսկ հարձակվել բանվորների ու գյուղացիների խորհուրդների յերկրի վրա՝ նշանակում է հարձակվել հենց մեզ՝ ճապոնական բանվորներին ու գյուղացիներին վրա: Իսկ այդպիսի թղթակցությունների ու հողվածների թիվը հասնում է սասնյակների ու հարյուրների: Յեւ դա իսկական յերաշխիք է, վոր կստեղծվի բանվորազուղացիական ճապոնիստ վորին յերպայրության յեւ պրոլետարական նամեհեւորության ձեռքեն սեկնում մեր Խորհրդային յերկրի նշխարավորները»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Ընդհանուր աշխարհագրական տեղեկություններ	3
2. Ճապոնիայի եկոնոմիկան	4
3. Ընդհանուր տեղեկություններ գյուղատնտեսության մասին	5
ա) Գյուղատնտեսության գերը	5
բ) Գյուղատնտեսության հետամնացությունը	6
գ) Ագրարային քաղաքականություն	10
4. Գյուղացիության դրությունը	13
ա) Հողագրիություն և վարձակալություն	13
բ) Ագրարային ճգնաժամի ավերները	16
գ) Չարտքեր և հարկեր	21
5. Գյուղատնտեսական պրոլետարիատի դրությունը	24
6. Ճապոնական իմպերիալիզմը նոր համաշխարհային պատերազմ և հրահրում	26
ա) Ինչ յերկիր և Մանջուրիան	27
բ) Ճապոնական ինտերվենցիան Մանջուրիայում	29
7. Կստեղծվի բանվորագյուղացիական ճապոնիա	35

ՀՀ Ազգային գրադարան



NL0937384

9170 50 4.

11
27332



Т. ТАГВОРЯН

Положение Японского крестьянства